## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «09» սեպտեմբերի 2016թ.

2016թ-ի սեպտեմբերի 09-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 11 հասցեում, տեղի ունեցավ ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | | |
|---|---|---|
| Գայանե | Հարությունյան | ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքների գծով տնօրեն. |
| Վահրամ | Աբիսողոմոնյան | ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնտեսական աշխատանքների գծով փոխտնօրեն. |
| Անահիտ | Բանդուկյանյան | ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ: |

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

| | | |
|---|---|---|
| Անի | Բազեյանը | ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ: |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գայանե Հարությունյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձի և վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման մասին:
2. Մասնակցի կողմից առաջարկված գնի (գների), առաջին տեղ զբաղեցրած մասնակից որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

## 1. ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Գայանե Հարությունյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 5 010 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

- ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը (այսուհետ՝ նաև մասնակից).

| Հ/հ | Մասնակցի անվանում | Մասնակցի գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- մասնակիցը հայտը պարունակող ծրարը կազմել և ներկայացրել է ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան,
- մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,

Որոշվեց՝

1. Գայանե Հարությունյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

## 2. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ (ԵՐԻ), ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցը ներկայացրել է հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

| Չափա-բաժնի համարը | Ապրանքի անվանումը | Մասնակցի անվանումը և առաջարկած գինը (գները) (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| | | «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ |
| 1. | Կենտրոնացված ջեռուցման կաթսաներ | 5 428 080 |

Հիմք ընդունելով այն, որ բավարար գնահատված հայտ ներկայացրած «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցում է ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնում կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ մասնակցի հետ վարվեցին բանակցություններ առաջարկված գնի իջեցման նպատակով:

Բանակցություններին մասնակցում էր «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արթուր Շադունցը:

Բանակցությունների արդյունքում «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի առաջարկած վեջնական գինը սահմանվեց 5 000 000 ՀՀ դրամ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

## 3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Հարությունյան ______________

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Աբիսողոմոնյան ______________

Ա. Բանդուկյանյան ______________

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան ______________